ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2016թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԴԱՎԹԱՇԵՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ կետի բ) ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28^2-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման կարգը հաստատելու մասին» N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելուց հետո առաջարկություն ներկայացնել Երևան քաղաքի բյուջեում համապատասխան միջոցներ նախատեսելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2016 թվականի ----------
N ——Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N1098-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված է Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում կապիտալ ծախսերի ծրագրերի տեսքով, որոնց իրականացումը ուղղված է բնակչության խմելու և ոռոգման ջրի, համայնքային նշանակության ճանապարհների, մանկապարտեզների, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների հիմնախնդիրների լուծմանը:

Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի ավարտուն տեսք չունեցող վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի առկա իրավիճակն ու նիշերի էական տարբերությունը հնարավորություն չի տալիս լիարժեք օգտագործել վերոնշյալ փողոցն ու թաղամաս տանող հատվածը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի Դավթաշենի 2-րդ թաղամասի վերին հատվածից դեպի Եղվարդի խճուղի և Տ. Պետրոսյան փողոց տանող տարածքը դարձնել գործուն ճանապարհային հանգույցը, այն համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և չափորոշիչներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև տվյալ հատվածում տեղի բնակիչների համար նորմալ երթևեկելի մաս ունենալու խիստ անհրաժեշտությունը, մշակվել են Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայն որոնց նախահաշվային արժեքը կազմում է 73,740.05 հազար դրամ:

Նշված աշխատանքների կազմակերպման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան իրականացված գնման գործընթացի արդյունքում Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների, այդ թվում նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման ընդհանուր գումարը կազմել է 56,642.8 հազար դրամ: Աշխատանքների ֆինանսավորումը նախատեսվում է

իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված 69,469.3 հազար դրամ առկա միջոցների շրջանակներում։

Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

- Հանգույցում նիշերի տարբերության ուղղման նպատակով՝ հողային աշխատանքներ,
- Տարածքում առկա ինժեներական և կոմունիկացիոն համակարգերի վերակառուցում,
- Գազամատակարարման համակարգի տեղափոխում,
- Ջեռուցման չգործող համակարգի երկաթբետոնյա առվակների և կոյուղահորերի քանդում և հեռացում,
- Ճանապարհային հատվածում խոշորահատիկ բազալտի խճաշերտի փռում և տոփանում՝ b=220մմ,
- Խճաշերտի վրա մանրահատիկ խճի և կվարցային ավազի խառնուրդի փռում՝ ներծծված տաք բիտումի մածուծանով,
- Ճանապարհի ասֆալտբետոնի 80 մմ ընդհանուր հաստությամբ թվով երկու շերտերի կառուցում՝ - 1-ին շերտ 45 մմ հաստությամբ խոշորահատիկ և 2-րդ շերտ 35 մմ մանրահատիկ խառնուրդներով,
- Տրանսպորտային հանգույցում, ճանապարհի երկայնքով 150x300 մմ բազալտե եզրաքարերի և h=1100 մմ երկաթբետոնե արգելապատերի տեղադրում,
- Տարածքի արտաքին մակերևութային ջրերի ջրահեռացում։

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի ամբողջական կարգավորել Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող գործուն ճանապարհային հանգույցը, միաժամանակ ունենալով արտաքին մակերևութային ջրահեռացման ծածկույթով ասֆալտապատ ճանապարհային հատված։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԴԱՎԹԱՇԵՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28[2]-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով:

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N1098-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսվում է նշված միջոցների օգտագործման համար սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ համաձայնություն ստանալու համար:

Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել են Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր, համաձայն որի այդ աշխատանքների ընդհանուր արժեքը, ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման արժեքը, կազմում է 73,740.05 հազար դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալը, Երևանի քաղաքապետարանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան իրականացվել է գնման գործընթաց, որի արդյունքում Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների, այդ թվում նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման ընդհանուր գումարը կազմել է 56,642.8 հազար դրամ:

Աշխատանքների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված 69,469.3 հազար դրամ առկա միջոցների շրջանակում:

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098–Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ կառավարությունից համաձայնությունն ստանալուց հետո նախատեսվում է համապատասխան միջոցներ նախատեսել Երևան քաղաքի բյուջեում:

Հաշվի առնելով վերոգրյալը Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԴԱՎԹԱՇԵՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԴԱՎԹԱՇԵՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին»» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ